ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԳՈՐԾՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XIX դ. – XX դ. սկիզբ)

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

Արևելյան Հայաստանը, որը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության ներքո, XIX դ. առաջին տասնամյակներում սկսել է աստիճանաբար միավորվել Ռուսաստանին: 1804 թ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով՝ 1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ռուսաստանի կազմի մեջ են մտել Հայաստանի հյուսիսային շրջանները. Գուգարաց աշխարհը՝ Փամբակը, Լոռին, Շամշադինը, ինչպես նաև հարավարևելյան շրջանները՝ Ղարաբաղը, Գարդմանաց աշխարհը՝ Գանձակ (Գյանջա) քաղաքով, Ղազախը, Թովուզի հյուսիսային և Շամխորի շրջանների արևմտյան մասերը, որը վերանվանվում է Ելիզավետպոլ, Զանգեզուրը, որի կազմի մեջ մտնում էր նաև Սոտքը, Մեղրին և Շորագյալը:

1828-ին Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանին է միավորվում Երևանի և Նախիջևանի խանություններն ու Օրդուբադի գավառը: Հետագայում այն անվանվում է Հայկական մարզ, իսկ 1850-ին վերանվանվում Երևանի նահանգ: Նահանգի մեջ էին մտնում նաև ներկայիս Նախիջևանի, Օրդուբադի և Սուրմալուի գավառները: 1877–78-ի ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ռուսաստանին է միանում Կարսի մարզը:

Այսպիսով, ցարական նահանգային բաժանումը չէր ընդգրկում տեղական ազգերի տարածքային ամբողջականությունը:

1. Կապիտալիզմի սաղմնավորումը և հայ բնակչության տեղաշարժերը

XIX դարի II կեսից Արևելյան Հայաստանում բնակչության բնական աճի և գաղթի ընթացքը համընկավ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացման ու կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորման և զարգացման, ինչպես նաև Կովկասը տնտեսապես նվաճելու հետ: Հենց այդ հանգամանքներն էլ թե՛ Ռուսաստանում, թե՛ Անդրկովկասում կանխորոշեցին բնակչության տեղաշարժերը: Վերջինիս ալիքը, ի թիվս այլ ժողովուրդների, առավել մեծ չափերով ընդգրկեց ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Արևմտյան Հայաստանից արտագաղթող հայ բնակչությանը:

Առաջին, *ճորտատիրական իրավունքի վերացումը և ապրանքադրամական հարաբերությունների ներթափանցումը գյուղ, դարավոր նիրհից արթնացրեց ոչ միայն Ռուսաստանը, այլև նրա գաղութային ծայրամասերը, այդ թվում՝ Անդրկովկասը: Վերջինս իր բնական հարստություններով, որ վաղուց արդեն գրավել էր ռուսական և օտարերկրյա կապիտալի ուշադրությունը,*

XIX դ. վերջին քառորդում ներգրավվում է համաշխարհային ապրանքաշրջանառության ոլորտը:

XIX դ. վերջին Անդրկովկասում ապրանքաշրջանառությունը և ապրանքային արտադրությունը, ուստի և կապիտալիզմը հաստատուն հիմքերի վրա են կանգնում: Թեև Անդրկովկասը, ամբողջությամբ վերցրած, իր տնտեսական զարգացմամբ, մեծ տերության արդյունաբերական կենտրոնների համեմատ, դեռ շատ էր ետ մնացել:

Երկրորդ, *Անդրկովկասի առանձին նահանգներ, Թիֆլիսն ու Բաքուն իրենց կապիտալիստական զարգացման մակարդակով շատ ու շատ առաջ էին անցել Ռուսական կայսրության միջին մակարդակից:*

Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում պայմանավորեց բնակչության աննախընթաց աճ, մասնավորապես Թիֆլիսում և Բաքվում: Այդ քաղաքների բնակչությունը 1850–1886 թթ. անհամեմատ արագ աճեց, քան Անդրկովկասի ողջ քաղաքային բնակչությունը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բնակչությունն Անդրկովկասի քաղաքներում 1830-1913 թթ.[1]

	1830-1834 թթ. միայն արական	1850 թ.	1873 թ.	1886 թ.	1897 թ.	1913 թ.
Թիֆլիս	11581	30814		78445	159590	344629
Բաքու(առանց հանքաշրջանի)	4582	7431	15105	86611	111904	248812*
Երևան	6135	12815	11938	14738	29006	29366**
Շուշի	5566	12724	24552	26806	25881	42569***
Ալեքսանդրապոլ	1744	11280	19976	24280	30616	51316
Գանձակ	5059	12996	18505	20294	33625	56305
Քութայիս	3893	2725	12741	22643	32476	57917
Բաթում	-	-	-	14803	28508	38615
Շամախի	5566	19558	25087	22139	20007	27527
Ախալցխա	5864	9951	-	16116	15357	23924
Նախիջևան	2900	4500	6877	6939	8790	8945
Օրդուբադ	1800	4156	3489	4199	4611	5655
Նոր-Բայազետ	-	2560	5363	7488	8486	13290
Կարս	-	-	-	3939	20805	30086

[1] *Տե՛ս* И. Ш о п е н. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб., 1852, с. 646; *Ջ. Կ ո ր կ ո տ յ ա ն. Երևան քաղաքի ժողովրդագրությունը (հարյուրամյա աճման պատկերը՝ 1830-1930 թթ.), Երևան, 1930, էջ 37,* Сборник сведений о Кавказе. Тифлис, ч. I, 1879, Всеобщая перепись населения Российской империи, ч. 61, с. 1; ч. 63, с. I; ч. 64, тетрадь I, СПб., 1900, с. I-3; ч. 69, с. I; ч. 71, с. I; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893 (без страниц); Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 220-256.

Անդրկովկասում կապիտալիզմի անհամաչափ զարգացումն ինքնին պայմանավորեց նրա բնակչության շարժման ուղղությունները, ինչպես նաև կապիտալիստական ֆաբրիկագործարանային արդյունաբերության համար աշխատուժի գոյացման աղբյուրները: Քանի որ Արևելյան Հայաստանը չէր բնութագրվում արդյունաբերական զարգացման մեծ թափով ու բարձր մակարդակով, Անդրկովկասը հայ բնակչության աճով պետք է գերազանցեր Արևելյան Հայաստանին, մասնավորապես Երևանի նահանգին ու Կարսի մարզին: Արևմտյան Հայաստանից արտագաղթող բնակչության մեծ մասը, չնայած նախապես բնակություն էր հաստատել Արևելյան Հայաստանում, ժամանակի ընթացքում գյուղի քայքայվող բնակչության հետ ցրվում էր Անդրկովկասով ու Հյուսիսային Կովկասով մեկ: Ինչպես Սև ծովի ափերին, այնպես էլ Հյուսիսային Կովկասի այլ վայրերում և Անդրկովկասում հայ բնակչությունը առանձնապես ավելանում է XIX և XX դդ. սահմանագլխին, որը համընկնում է ոչ միայն Կովկասի տնտեսական նվաճման ավարտի, այլև Անդրկովկասում կապիտալիզմի բուռն զարգացման հետ: Դրա հետևանքով հայ բնակչությունը հատկապես ավելանում է Բաքվի, Թիֆլիսի նահանգներում, Բաթումի և Սուխումի օկրուգներում:

1886–1913 թթ. Երևանի նահանգում հայ բնակչությունն ավելացել է ընդամենը 161,8%-ով, իսկ Անդրկովկասում, առանց Երևանի նահանգի և Կարսի մարզի, հայ բնակչության աճը կազմել է 185,9%: Ինչ վերաբերում է 1897–1913 թթ. ընկած ժամանակամիջոցին, ապա ամբողջ Կովկասում հայ բնակչությունն ավելացել է 153,2%-ով : Պարզ է, որ ընդամենը 15 տարվա ընթացքում, այն ժամանակվա մահացության բարձր մակարդակի պայմաններում, նման բնական աճ տեղի ունենալ չէր կարող (տարեկան միջին հաշվով 2,9%): Որ դա բնակչության ակտիվ տեղաշարժերի արդյունք է, վկայում է այն փաստը, որ այդ ընթացքում ամբողջ ռուսաստանյան կայսրության մասշտաբով բնակչության միջին տարեկան աճը հավասարվում էր 1,6, Կովկասում՝ 1,4, Անդրկովկասում՝ 1,85, Երևանի նահանգում և Կարսի մարզում՝ 1,75: Մինչդեռ այդ ընթացքում Երևանի նահանգում և Կարսի մարզում հայ բնակչության միջին տարեկան աճը հավասարվում էր 2,25%-ի[2]:

Հայ բնակչությունը բավականին բարձր տեսակարար կշիռ ուներ Անդրկովկասի մի շարք նահանգներում, քաղաքներում ու գավառներում: Դա, անկասկած, բացատրվում էր ոչ միայն XIX դ. կեսերից ի վեր Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից կատարված ներգաղթով, այլև այն փաստով, որ, ինչպես նկատեցինք՝ Արևելյան Հայաստանի մի մասը մտնում էր Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների մեջ:

---

[2] *Հաշվարկները կատարվել են հետևյալ աղբյուրների՝* Свод статистических данных... *ժողովածուի,* Кавказский календарь на 1914 г., Тифлис, 1913, отд. стат., с. 135-141, *ինչպես նաև 1897 թ. Համառուսաստանյան առաջին ընդհանուր մարդահամարի համապատասխան հատորների տվյալների հիման վրա:*

Անդրկովկասում հայ բնակչության տեղաշարժերը, մասնավորապես XX դ. սկզբին, էլ ավելի էին բարձրացնում նրա տեսակարար կշիռը երկրամասի առանձին նահանգներում:

Անդրկովկասի տարբեր նահանգներում կապիտալիզմի անհամաչափ զարգացումը պայմանավորեց բնակչության շարժը դեպի կապիտալիստորեն զարգացող քաղաքներ թե՛ գյուղական վայրերից, թե՛ կապիտալիստական տեսակետից թույլ զարգացող քաղաքներից: Ժամանակակիցները գրում են, որ «Բագու-Թիֆլիզ Երևանյան երկաթուղու գիծը բացվելուն պես Ղարաբաղի, Շամախու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գյուղացիք վազեցին Բագու... Կովկասի զանազան անկյուններից հազարավոր ու բյուրավոր հայ ընտանիքներ թողնելով իրենց հայրենի աշխարհը, իրենց պապենական ազնիվ պարապմունքները, հետզհետե գաղթեցին Անդրկասպյան երկրներից սկսած, մինչև լայնածավալ Ռուսիայի ամենահեռավոր ծայրերը»[3]: Շատ տղամարդիկ Բաքու և Անդրկասպյան երկրամաս վաստակի էին գնում սեպտեմբերից և վերադառնում էին հաջորդ տարվա դաշտային աշխատանքներին մասնակցելու համար[4]:

Նշվածը երևույթի միայն մի կողմն է և չի արտահայտում ինչպես Անդրկովկասի հայ գյուղի շերտավորման, ուստի և նրա բնակչության շարժի, այնպես էլ նրա քաղաքային հայ բնակչության աճի ընթացքը: Բանն այն է, որ հնուց ի վեր Անդրկովկասում հայերը տարածված էին ամենուրեք, իսկ Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների կազմավորման ու հետագա զարգացման շնորհիվ խորտակվեցին ոչ միայն գյուղի ու քաղաքի միջև նախկին ներփակ կյանքի, այլև ազգային միջնորմները: Ուստի, կապիտալիզմը թափանցում է նաև հայ գյուղի խորքերը: Գյուղացիական մանր տնտեսությունը կորցնում է իր նախկին կայունությունը, երերում են գյուղի սոցիալ-տնտեսական կյանքի սովորական հիմքերը: Գյուղում սկիզբ առած աստիճանական շերտավորման պրոցեսն ավելի ու ավելի ինտենսիվ բնույթ է կրում: Շոշափելի և իրական են դառնում, մի կողմում, նախկին մանր սեփականատերերի լրիվ քայքայման և ունեզրկման հիման վրա ընչազուրկ խավի, իսկ մյուս կողմում՝ վաշխառուների դասի գոյացումը:

Դարավոր նիրհից արթնացող նահապետական գյուղացին, որ զրկվում է հողից ու աղքատանում, գնում է ֆաբրիկա: Նա արդեն աշխատուժը հանում է վաճառքի, դառնում է վարձու բանվոր և կտրվում իր բնօրրանից: Գյուղից արտամղվող հենց այդ խավը դառնում է Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնների աշխատուժի համալրման հիմնական աղբյուր: Էլ չենք խոսում այն մասին, որ ռեֆորմը հողաբաժնով չապահովեց շատ հայ գյուղացիների:

Մանր արտադրության վրա հիմնված գյուղացիական խարխուլ տնտեսությունները ուժեղացնում են բնակչության տեղաշարժերը: Բնակչության

---

[3] *Ղ ա զ ա ր Ք ա հ . Հ ո վ ս ե փ յ ա ն. Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին. Թիֆլիս, 1904, էջ 26:*

[4] Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1898, вып. 25, отд. II, с. 38.

նախկին լճացած, ներփակ և անշարժ կյանքն աստիճանաբար իր տեղը զիջում է շարժուն կյանքին:

Գյուղում և քաղաքում վարձու աշխատանքի պահանջ ներկայացնողների շարքերը խտանում էին նաև ի հաշիվ աշխատանքային տարիք մուտք գործողների, որոնք պետք է սեփական աշխատանքով ապահովեին ոչ միայն իրենց գոյությունը, այլև թեթևացնեին ընտանիքի նյութական հոգսերը:

Հայ գյուղում հողազրկման ընթացքը բնութագրվում է ոչ միայն ապրանքադրամական հարաբերությունների արմատավորման ինտենսիվացումով, այլև ընտանիքների շերտավորմամբ, նոր ընտանիքների կազմավորումով: Նախկին պապենական ընտանիքների երկճեղքումով բաժան-բաժան էր լինում նաև նրանց հողն ու ունեցվածքը: Ի վերջո, նոր կազմավորվող ընտանիքների մեծ մասը զրկվում էր հողից, ունեցվածքից և պապենական օջախում ապրուստ հայթայթելու հնարավորությունից: Մեծ մասշտաբներ է ընդունում առևտուրը, մասնավորապես հողի վաճառքը:

Ճիշտ է, կապիտալը կուտակվում էր նաև Զանգեզուրի և Ալավերդու պղնձահանքերում, Երևանի նահանգի որոշ արդյունաբերական ձեռնարկություններում, բայց հայ գյուղի շերտավորումն ավելի ուժեղ էր արտահայտվում, քան կապիտալի կուտակումը Արևելյան Հայաստանում: Զանգեզուրի և Ալավերդու պղնձահանքերը չէին կարող կլանել այնքան աշխատող ձեռք, որքան շերտավորման հետևանքով արտամղվում էր հայկական գյուղից: Փողատեր դասակարգը, հանձինս առևտրավաշխառուական խավի, ձգտում էր Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները և վերածում արդյունաբերական բուրժուազիայի: Բնակչության, այդ թվում աշխատանքային տարիք մտնողների բնական աճի տեմպերը գերազանցում էին ժողովրդական տնտեսության աճի տեմպերին: Աշխատուժի առաջարկի և նրա պահանջարկի միջև առաջացած խզումը հանգեցնում էր «ավելցուկ» բնակչության, որը զբաղմունքի ելքը ինչ-որ չափով գտնում էր արտագնացության մեջ:

Նման պայմաններում աշխատուժը արտահոսում էր Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս և գնում գերազանցապես այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ գնում էին ձևավորվող հայ բուրժուազիան և նրա կապիտալը: Ազգային միջնորմների խորտակման հետ մեկտեղ կարգավորվում էին բնակչության տեղաշարժերը, նոր թափ ստանում զարգացող քաղաքները, ուր կենտրոնանում էր երիտասարդ աշխատուժը: Դա օրինաչափ պրոցես է, որը, սակայն, չի թողել իր մասին հավաստի ու լրիվ թվական և ուղղակի այլ տվյալներ:

Հայ գյուղից արտագնացության մեծ մասշտաբների մասին անուղղակի տվյալներ են տալիս «Կովկասյան օրացույց»-ը և Համառուսաստանյան մարդահամարը: Այդ տվյալները ցույց են տալիս, թե ինչպես արտագնացությունն իր կնիքն էր թողնում բնակչության ոչ միայն տարածքային տեղաբաշխման, զբաղմունքի տարբեր բնագավառներում նրա բաշխվածության, այլև սեռատարիքային կազմի վրա: Անդրկովկասում քաղաքային բնակչության ավելանալը, որ գերազանցապես կատարվում էր գյուղական արտագնաց բնակչութ-

յան հաշվին, հանգեցնում էր և՛ գյուղական, և՛ քաղաքային վայրերում բնակչության սեռատարիքային կազմի նորմալ հարաբերակցության խախտմանը:

Խոշոր քաղաքներում տղաների և գյուղերում աղջիկների գերակշռությունը դառնում է զարգացող կապիտալիզմին ուղեկցող օրինաչափություն: Անդրկովկասի բոլոր այն քաղաքներում, ուր արդյունաբերությունը և նրան հարակից մյուս ճյուղերը չէին դրսևորում զարգացման համեմատաբար բարձր թափ, ինչպես նաև վարչական կենտրոններ չէին, չունեին զորք, տղամարդկանց ու կանանց թվի հարաբերակցության մեծ խզում չէր նկատվում: Մինչդեռ զարգացող խոշոր քաղաքների բնակչության մեջ գերակշռում էին տղամարդիկ, իսկ արտագնացություն տվող գյուղական վայրերում, քաղաքների համեմատությամբ, կանանց հարաբերական թիվն ավելի բարձր էր: Ըստ որում, Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորման պահից ի վեր ամենաակտիվ աշխատանքային տարիքում սեռերի մեծ տարբերություն նկատվում էր Թիֆլիսում ու Բաքվում, Երևանում և Ալեքսանդրապոլում, թեև այն բնորոշ էր նաև մյուս քաղաքներին: Որ այդ երևույթը կապիտալիստական հարաբերությունների զարգացման և բնակչության շարժունակության ինտենսիվ դրսևորման հետևանք էր, կասկած չի հարուցում: Միջին տարիքի (20-49) կանայք, տղամարդկանց համեմատությամբ, խիստ պակաս էին քաղաքներում, մինչդեռ բարձր և ցածր տարիքի կանանց հարաբերական թիվը համեմատաբար մեծ էր:

Անկասկած, հարկ չկա նկատի առնելու այդ քաղաքներում վերոհիշյալ տարիքի տղամարդկանց ու կանանց թվերի փոխհարաբերությունը, մանավանդ, որ միշտ էլ և՛ գյուղական, և՛ քաղաքային վայրերում տղամարդիկ թվապես գերազանցել են կանանց: 1897 թ. մարդահամարի տվյալներով, յուրաքանչյուր 1000 արականի հաշվով, Բաքվում բնակվում էր 673, Թիֆլիսում՝ 676, Երևանում՝ 674, Գանձակում՝ 795, Ալեքսանդրապոլում՝ 607 իգական սեռի բնակչություն: Արական և իգական սեռերի տոկոսային հարաբերության խզումը Անդրկովկասի գյուղական ու քաղաքային հայ բնակչության միջև ավելի արտահայտիչ էր:

Արտագնացությունը մեծ էր նաև Անդրկովկասի հատկապես հայկական գյուղերից: Այդ են վկայում դարձյալ թվերը: 1913 թ., քաղաքային վիճակագրության տվյալներով, Բաքվի հայ եկվոր բնակչությունը կազմում էր 42619 մարդ: Այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից եկել էին 12950, Զանգեզուրից՝ 9454, Շամախիից՝ 9143, Երևանի նահանգից՝ 6770, Սևանի ավազանից՝ 1917, Նուխիից՝ 1187, Ղազախից՝ 1198 մարդ[5]:

Այսպիսով, Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների և գյուղում շերտավորման խորացման հետևանքով ծավալվում է արտագնացության հոսք դեպի քաղաքներ՝ զբաղմունք և ապրուստ հայթայթելու ակնկալությամբ: Կապիտալիզմը դեպի քաղաք էր ձգում ապրանքաղրամական հա-

[5] Обзор Эриванской губернии за 1912 г. , Эривань, 1913, с. 14; Обзор Эриванской губернии за 1913 г., Эривань, 1914, с. 16; Обзор Эриванской губернии за 1914 г., Эривань, 1915, с. 17.

բաբերությունների հետևանքով շերտավորվող գյուղացիությանը՝ անկախ նրա բնակչության ազգային պատկանելությունից ու բնակավայրից: Եվ եթե փորձենք պատկերացում կազմել, մի կողմից, հայ գյուղի շերտավորման, մյուս կողմից՝ Արևելյան Հայաստանում նրա քաղաքային բնակչության աճի մասին հայկական նահանգների քաղաքային բնակչության օրինակով, ապա կհանգենք սխալ եզրակացությունների և չենք կարող ներկայացնել հայ բնակչության տեղաշարժերի իրական պատկերը:

Անդրկովկասի մյուս քաղաքների համեմատությամբ Արևելյան Հայաստանում քաղաքային բնակչության դանդաղ աճը և բնակչության ընդհանուր թվում նրա ունեցած ցածր տեսակարար կշիռը բացատրվում է՝ նրա քաղաքներում կապիտալիստական հարաբերությունների դանդաղ ընթացքով, սպասարկման ոլորտի նեղությամբ, հաղորդակցության միջոցների ցածր աստիճանով, հենց այդ քաղաքներում բնակչության զբաղմունքի բնույթով: Թեև Երևանի նահանգում առևտուրն ընդունում էր լայն ծավալ, բայց այն միակողմանի էր, կաշկանդված էր նահանգի մի շարք քաղաքներում բնակչության գյուղատնտեսական զբաղմունքի պատճառով. քաղաքային բնակչության մի զգալի մասը գյուղատնտեսական մթերքներով բավարարում էր ինչպես իր սեփական, այնպես էլ այլ քաղաքների բնակչության պահանջները: Ինչ վերաբերում է Անդրկովկասի հայ բնակչությանը, ապա այն, ամբողջությամբ վերցրած, բնութագրվում էր աճի մեծ ցուցանիշներով:

Խնդիրը միայն այդ չէր: Անդրկովկասի հայ բնակչությունը բնութագրվում էր նաև քաղաքներում համակենտրոնացման բարձր աստիճանով: Դա, նախ, դրսևորվում էր երկրամասի հայ բնակչության մեջ նրա քաղաքային բնակչության, և, երկրորդ, երկրամասի քաղաքային բնակչության մեջ մյուս ազգությունների համեմատ հայ քաղաքային բնակչության ամենաբարձր ցուցանիշով (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Անդրկովկասի քաղաքային բնակչության աճը ըստ նահանգների և ազգությունների 1886-1914 թթ. (այլ ազգությունները՝ ընդհանուրի մեջ)[6]

Նահանգներ	1886 թ.				1914 թ.			
	Ընդհանուր բնակչութ.	Այդ թվում			Ընդհանուր բնակչութ.	Այդ թվում		
		ռուսներ	հայեր	վրացիներ		ռուսներ	հայեր	վրացիներ

[6] *Աղյուսակը կազմված է հետևյալ տվյալներով.* Кавказский календарь на 1915 г., с. 218-256.

* *Առանց Բաքու քաղաքի հանքաշրջանի:*

Թիֆլիսի	31183	15066	71008	34854	426595	81566	173404	97916
Բաքվի՝	39652	23130	29747	-	310264	73240	133959	4586
Երևանի	57594	403	39941	-	108572	6185	76128	286
Քութայիսի	52626	3610	11305	26089	179728	40367	25787	80887
Ելիզավետպոլի	72994	178	28768	153	155727	7794	43561	346
Կարսի մարզ	8825	421	4789	-	48602	2356	38057	122
ընդամենը	462874	42808	185558	61096	1229488	211508	490896	184143
տեսակարար կշիռը ըստ ազգությունների	100,0	9,25	40,09	13,2	100,0	17,2	39,92	14,97
աճը ըստ ազգությունների 1914 թ. 1886 թ. նկատմամբ					265,62	494,09	264,55	301,4

Հիշատակված աղյուսակների տվյալները արտահայտում են նաև երրորդ օրինաչափությունը, այն, որ 1886–1914 թթ. հայ քաղաքային բնակչությունը դրսևորել է փոքր-ինչ դանդաղ աճ, քան միջին հաշվով Անդրկովկասի քաղաքային ողջ բնակչությունը: Աճի բարձր ցուցանիշ են ունեցել ռուսները և վրացիները: Օրինակ, այդ ընթացքում քաղաքային ռուս բնակչությունն ավելացել է մոտ 4,9, վրացիներինը՝ 3,0 անգամ, մինչդեռ հայերինը ավելացել է 2,7 անգամ: Դրա հետևանքով հայ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը Անդրկովկասի քաղաքային բնակչության մեջ 1886 թ. 40,1%-ից 1914 թ. չնչին չափով իջել և կազմել է մոտ 40%:

Մինչդեռ չպետք է անտեսել այն իրողությունը, որ քաղաքային հայ բնակչության աճի ամեն մի տոկոս, բացարձակ իմաստով, թվապես ավելի շատ է, քան վրացիներինն ու ռուսներինը: Այդ իսկ պատճառով, չնայած վրացիների ու ռուսների քաղաքային բնակչության համեմատաբար արագ աճին, Անդրկովկասի ավելացող քաղաքային բնակչության մոտ 39,8%-ը ապահովում էին միայն հայերը: Պարզ ասած, 1886–1914 թթ. Անդրկովկասի 766814 մարդով ավելացած քաղաքային բնակչության ավելի քան 305338-ը հայեր էին (մոտ 40 %-ը):

Հայ բնակչությունը կենտրոնացած էր Անդրկովկասի այն ժամանակի խոշոր քաղաքներում, ուր նրանք նույնիսկ ունեին բացարձակ գերակշռություն (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հայ բնակչության տեսակարար կշիռը Անդրկովկասի քաղաքներում 1886, 1897, 1914 և 1916 թթ.[7]

Քաղաքներ	1886	1897	1914 հունվար	1916 հունվար
Թիֆլիս	47.7	29.5	37.6	43.1
Բաքու	28.3	17.0	23.0	23.8

[7] *Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալներով.* Первая всеобщая перепись ...; Кавказский календарь на 1915 г. Тифлис, 1914, с. 218-256; Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 180-221.

Երևան	48.5	43.2	52.9	72.6
Ալեքսանդրապոլ	94.6	71.1	87.9	88.0
Գանձակ	43.9	35.9	20.0	21.0
Քութայիս	10.5	3.9	3.1	3.2
Բաթում	23.4	24.0	25.5	27.6
Կարս	63.0	50.0	83.9	84.1
Շուշի	56.7	55.7	52.7	53.3
Ախալցխա	64.6	59.2	75.8	71.3
Ախալքալակ	94.9	76.0	89.5	87.2
Գորի	40.0	20.3	26.9	39.4
Դուշեթ	57.1	18.3	42.8	44.6
Սղնաղ	55.2	28.2	50.9	50.8
Թելավ	81.9	74.9	70.5	70.5
Սուխում	12.9	13.5	12.3	13.3
Շամախի	17.9	12.6	35.6	16.3
Նուխի	18.0	16.9	15.0	15.3
Նախիջևան	29.4	25.7	29.5	29.8
Նոր-Բայազետ	99.2	95.4	95.3	97.3
Անդրկովկասում	40.1	30.3	39.9	36.3

Հայերը Վրաստանում բնակվում են վաղուց: Բավական երկար ժամանակ Վրաստանի մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Թիֆլիսում, բնակվել են ավելի շատ հայեր, քան՝ վրացիներ: Ըստ վիճակագրական աղբյուրների՝ 1701 թ. Թիֆլիսում բնակվում էին 14,5 հազ. հայ և 2 հազ. վրացի: 1834 թ. այստեղ հայերն ավելացան և կազմեցին 17148, վրացիները՝ 3500 մարդ, 1886 թ.՝ համապատասխանաբար՝ 37420 և 21257, 1897 թ.՝ 47133 և 41151, 1914 թ.՝ 129573 և 69563 մարդ:

Բաքվում հայերի տեսակարար կշիռը և նրանց բացարձակ թիվը առանձնապես ավելացավ XX դ. առաջին տասնամյակներին: Դարասկզբին նավթարդյունաբերության բանվորների հիմնական կորիզը ռուսների հետ հայ որակյալ բանվորությունն էր: Ինչ վերաբերում է Գանձակին, ապա ամբողջ նահանգը պատմական Հայաստանի մի մասն է:

Անդրկովկասի քաղաքային բնակչության մեջ հայ բնակչության համակենտրոնացման բարձր աստիճանը, Արևելյան Հայաստանում քաղաքային բնակչության ընդհանրապես թույլ արտահայտությունը կանխորոշում էին հայ բնակչության զբաղմունքի բնույթը նահանգի ներսում և նրանից դուրս:

2. Ինքնագործները Արևելյան Հայաստանում

Ամեն մի երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ էր նրա ինքնագործների զբաղմունքի բնույթը, որը բխում է հասարակության սոցիալ-տնտեսական պայմաններից:

Արդյունաբերական տեսակետից զարգացած երկրները բնութագրվում են արդյունաբերական բնույթի զբաղմունքներում բնակչության ընդգրկվածության բարձր մակարդակով, մինչդեռ ագրարային երկրներում բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսական մթերքների արտադրությունն է:

Անդրկովկասում արդյունաբերությունը բուռն զարգացում ապրեց XIX դ. վերջին և XX դարասկզբին: Կապիտալիզմի շատ արագ զարգացման շնորհիվ Բաքուն դառնում է Ռուսաստանի ինդուստրիալ խոշոր կենտրոններից մեկը[8]: Նավթի հանույթը 1901 թ. հասավ մինչև 667 մլն փթի, աշխարհում բռնելով առաջին տեղը[9]: Արդյունահանող և նրան հարակից ճյուղերն արագորեն զարգանում էին նաև Վրաստանում և Արևելյան Հայաստանում: Բաքվի նավթը, Ճիաթուրու մարգանեցը, Ալավերդու և Զանգեզուրի պղինձը Անդրկովկասին բերում էին համաշխարհային ճանաչում: Չխոսելով Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ունեցող Բաքվի նավթահանույթի մասին, նշենք, որ Ճիաթուրու մարգանեցի արտադրությունը կազմում էր մարգանեցի համաշխարհային արդյունահանության ավելի քան 30%ը[10]: Ճիաթուրու մարգանեցն ամբողջությամբ արդյունահանվում էր: Ալավերդու և Զանգեզուրի պղնձարդյունաբերությունը տալիս էր Ռուսաստանի պղնձի հանույթի 1/3-ը[11]:

Չնայած արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման ու համակենտրոնացման բավական բարձր մակարդակին, Անդրկովկասն ամբողջությամբ վերցրած, XIX դարավերջին, այնուամենայնիվ, ագրարային երկիր էր, միակողմանի և թույլ զարգացած գյուղատնտեսությամբ: Արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը պայմանավորում էր արդյունաբերության շատ ճյուղերում և գյուղատնտեսության մեջ խիստ պրիմիտիվ արտադրության միջոցների կիրառումը, գերիշխում էր ձեռքի ծանր աշխատանքը, որի հետևանքով բնակչության ճնշող մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Այստեղ նախակապիտալիստական և կապիտալիստական հարաբերությունները հանդես են գալիս միահյուսված: Բնակչության սպասարկման բնագավառը զարգացած չէր, մասնավորապես լուսավորության և առողջապահության ոլորտներում չափազանց հետամնաց վիճակ էր տիրում:

1897 թ. մարդահամարների տվյալներով Անդրկովկասում բնակչության սպասարկման բնագավառում զբաղված էր նրա ինքնագործների 7-8%-ը, որի մեծ մասը մասնավոր ծառայողներ, սպասավորներ և օրամշակներ էին: Ըստ

---

[8] Б. А х у н д о в. Образование монополий в нефтяной промышленности Азербайджана.– Материалы к V Международному конгрессу. Л.–Баку, 1970,с. 76.

[9] *Նույն տեղում:*

[10] Кооперация в Закавказье, Тифлис, 1925, вып. I, отд. II, с. 283.

[11] Труды первого Закавказского экономического совещания, Тифлис, ч. I, 1923, с. 26-27.

որում, առանձին նահանգներում, մասնավորապես գյուղական շրջաններում, պատկերը շատ ավելի դժգույն էր: Գյուղում բնակվող և գյուղատնտեսական զբաղմունք ունեցող ինքնագործների տեսակարար կշիռը ինքնագործների ընդհանուր թվում արտահայտվում էր ավելի ցածր ցուցանիշով, քան նրանց ընտանիքի անդամներինը՝ Անդրկովկասի մասշտաբով ընտանիքի անդամների ընդհանուր թվում: Մինչդեռ քաղաքներում, ուստի և արդյունաբերության, շինարարության, առևտրի, հաղորդակցության բնագավառներում զբաղված բնակչության մոտ հակառակն էր: Այդ բնագավառներում զբաղված ինքնագործների, ինչպես և սպասավորների ու տնային ծառայողների տեսակարար կշիռը ինքնագործների ընդհանուր թվում արտահայտվում է ավելի բարձր ցուցանիշով, քան ընտանիքի անդամներինը՝ նրանց ընդհանուր թվում: Իրոք, եթե գյուղատնտեսության մեջ ինքնագործները կազմում էին ամբողջ ինքնագործների 64,1%-ը, ապա նրանց ընտանիքի անդամների համապատասխան ցուցանիշը հավասարվում էր 85,2%-ի: Մինչդեռ արդյունաբերության և շինարարության մեջ զբաղված էր ինքնագործների 12,2%-ը, իսկ նրանց ընտանիքի անդամները կազմում էին Անդրկովկասի ոչ ինքնագործ բնակչության 4,9%-ը: Հաղորդակցության ու առևտրի բնագավառներում այդ ցուցանիշները համապատասխանաբար արտահայտվում են 8,7 և 4,9, սպառողների և մասնավոր ծառայողների մոտ՝ 9,7 և 2,7%-ով:

Այս նույնը, ակնհայտ տարբերությամբ, դրսևորվում է Անդրկովկասի առանձին նահանգներում, ինչպես նաև այնտեղ բնակվող առանձին ազգությունների մոտ: Ըստ որում, այդ տարբերություններն առանձնապես ակնառու էին հայ բնակչության մեջ[12]: Նման երևույթը նախ, գյուղում, քաղաքային վայրերի համեմատությամբ, բնակչության ծննդաբերության համեմատաբար բարձր մակարդակի և ընտանիքում երրորդ սերնդի առկայության ուղղակի արտահայտությունն է: Երկրորդ, դա բացատրվում է մեզ արդեն ծանոթ այն փաստով, որ քաղաքներում բնակվող և առևտրաարդյունաբերական զբաղմունքներում ընդգրկված բնակչության մի զգալի մասը արտագնացներ էին, որոնք ամենաաշխատունակ տարիքում օրվա ապրուստ հայթայթելու նպատակով դարձել էին վարձու բանվորներ: Իսկ որոշ մասը դեռևս ընտանիք չկազմած աղջիկներ էին: Նրանք սպասավոր կամ տնային ծառայողներ էին[13]:

Այսպիսով, Անդրկովկասի ամբողջ բնակչության մեջ հայերի բարձր տեսակարար կշիռը չէր ուղեկցվում ինքնագործների համապատասխան մեծությամբ: Ինչպես հիշատակվեց, 1897 թ. Անդրկովկասի ողջ բնակչության 22,2%-ը հայեր էին (առանց զորքի): Մինչդեռ ինքնագործ բնակչության մեջ նրանք կազմում էին 19,5%: Ինքնագործ բնակչությունը առանձնապես ցածր

---

[12] *Անդրկովկասի արդյունաբերության մեջ զբաղված յուրաքանչյուր 100 հայ ինքնագործ միջին հաշվով ուներ 176,7 ընտանիքի անդամ, առևտրում և տրանսպորտում՝ 219,7, գյուղատնտեսության մեջ՝ 605 ընտանիքի անդամ:*

[13] *Անդրկովկասում զբաղմունք ունեցող իգական սեռի ինքնագործների ավելի քան 26%-ը մասնավոր ծառայողներ, սպասավորներ և օրամշակներ էին:*

տոկոս էր կազմում գյուղական վայրերում և գյուղատնտեսական զբաղմունքներում:

1897 թ. Անդրկովկասի գյուղական վայրերում բնակվողների 20,5%-ը հայ բնակչությունն էր, իսկ ինքնագործների մեջ նրանք կազմում էին ընդամենը 16,7, քաղաքային վայրերում համապատասխանաբար՝ 32,5 և 28,8% (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ինքնագործ բնակչությունը և նրանց խնամքի տակ գտնվողներն Անդրկովկասում (1897 թ. մարդահամարի նյութերով, առանց զինվորականների)

		Ինքնագործներ	Ընտանիքի անդամներ	Ինքնագործ բնակչության յուրաքանչյուր 100 շնչի հաշվով ընտանիքի անդամներ
1.	Բնակչությունն Անդրկովկասում	1092059	3757974	344,1
	այդ թվում՝	879037	2896700	329,5
	ա) առանց հայ բնակչության	213022	861274	404,4
	բ) հայ բնակչությունը			
2.	Անդրկովկասի գյուղական վայրերում	829171	3368312	406,2
	այդ թվում՝			
	ա) առանց հայ բնակչության	691011	2644694	382,7
	բ) հայ բնակչությունը	138160	723618	523,6
3.	Անդրկովկասի քաղաքներում	262888	389662	148,2
	այդ թվում՝			
	ա) առանց հայ բնակչության	188026	252008	134,0
	բ) հայ բնակչությունը	74862	137654	183,8

Դա բացատրվում էր՝

1) Անդրկովկասում բնակվող եվրոպացի, ռուս, մասամբ նաև վրացի ընտանիքների համեմատությամբ հայկական ընտանիքների ավելի մեծ կազմով (երեխաների ավելի շատ թիվ, երրորդ սերնդի առկայություն և այլն):

2) Պարսկաստանից, Կովկասի զանազան վայրերից և Կազանից Անդրկովկաս աշխատանքի մեկնած բնակչության առկայությամբ, որոնք գերազանցապես ընտանիք չունեին:

3) Քաղաքներում եվրոպացիների, ռուսների, մասամբ նաև վրացիների համեմատությամբ վարձու աշխատանքներում ընդգրկված հայ կանանց քիչ թվով:

Այս տվյալները վերաբերում են XIX դարավերջին: Մինչդեռ XX դարի երկրորդ տասնամյակում պատկերն ավելի քան փոխվեց: Արտագնացության ու-

ժեղացումը հանգեցրեց քաղաքային հայ բնակչության ընտանիքների փոքրացմանը: Եվ երբ XX դարասկզբին հայերն ազերիների հետ գավառներում ունեին ընտանիքի ամենաբարձր միջին կազմ, ապա քաղաքներում այն զգալիորեն զիջում էր ռուսներին և եվրոպացիներին: Այդ իսկ պատճառով, նավթարդյունաբերության մեջ աշխատող ռուս և եվրոպացի բանվորների ընտանիքի միջին կազմը հավասարվում է 4,0 մարդու, մինչդեռ հայերինը՝ 3,5, Կազանի թաթարներինը և լեզգիներինը՝ 3,6, ազերիներինը՝ 3,1, պարսիկներինը՝ 3,4, մարդու[14]: Բավական է ասել, որ ընտանիք ունեին Բաքվի նավթարդյունաբերության բանվորների միայն 25,8%-ը, որոնք գերազանցապես ռուսներ և Եվրոպայից եկած ազգություններ էին: Հայերից և վրացիներից ամուսնացածները կազմում էին 46,6%, ընտանիքի հետ էին ապրում 25,3%: Ռուսները և եվրոպացիները, համապատասխանաբար, 79,2 և 73,7 %:

Թեև Կազանի թաթարների, պարսիկների, լեզգիների ու ազերիների մեջ ևս ամուսնացած բանվորները շատ էին, բայց նրանք ապրում էին առանց ընտանիքի: Հայ բանվորների մոտ կեսը ամուսնացած չէր և քաղաքում ընտանիքի հետ ապրում էր ամուսնացածների միայն մեկ քառորդը: Ըստ որում, եթե հայ բանվորների՝ առանց ընտանիք լինելու հիմնական պատճառներից մեկը, աշխատավարձի քիչ լինելու հետ մեկտեղ, բացատրվում է ամուսնացած չլինելով, նրանց համեմատաբար երիտասարդ տարիքով, ապա թվարկված ազգությունների մոտ հիմնականում բացատրվում է ցածր աշխատավարձով, ինչպես նաև հայրենիքից հեռու գտնվելով:

Ինքնագործ բնակչությունը բարձր ցուցանիշ ուներ Անդրկովկասի արտագնացներ ընդունող, ինչպես նաև շատ թե քիչ չափով կանանց աշխատուժի կիրառման բնագավառ ունեցող նահանգներում:

Անդրկովկասում հայ ինքնագործների ցուցանիշի վրա մեծապես ազդում էին Արևելյան Հայաստանի բնակչության կառուցվածքում դրսևորվող օրինաչափությունները: Այսպես, օրինակ, բնակչության ընդհանուր կազմում ինքնագործների ամենանվազ ցուցանիշով առանձնանում էին Երևանի նահանգն ու Կարսի մարզը: Մինչդեռ մնացած նահանգներում հայ ինքնագործների տեսակարար կշիռը բարձր էր ոչ միայն Արևելյան Հայաստանի միջին ցուցանիշի, այլև Անդրկովկասի մի քանի այլ նահանգների բնակչության համապատասխան ցուցանիշի նկատմամբ: Դա հատկապես վերաբերում է տղամարդ բնակչությանը և բացատրվում է հայկական նահանգներից ու հայկական գյուղերից կատարվող արտագնացությամբ, այն փաստով, որ հայ տղամարդ բնակչության մի զգալի մասը այլ նահանգներ արտագնացության էր դիմում առանց ընտանիքի անդամների: Ինչ վերաբերում էր Բաքվի և Քութայիսի նահանգներին, որոնք բնութագրվում էին բնակչության ընդհանուր թվում ինքնագործների բարձր տեսակարար կշռով, ապա դրանցում հայ բնակչության մեջ ինքնագործների տեսակարար կշիռը գերազանցում էր այդ նահանգների միջինին: Բաքվի նահանգում յուրաքանչյուր 100 ինքնագործի հաշվով ընտա-

[14] А. С т о п а н и. Нефтепромышленный рабочий и его бюджет. Баку, 1916, с. 30.

նիքի անդամները կազմում էին շուրջ 295, իսկ հայերի մոտ՝ 178 մարդ էր: Քութայիսի նահանգում այն, համապատասխանաբար, կազմում էր 338 և 170,4 մարդ (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ինքնագործ բնակչության տեսակարար կշիռը Անդրկովկասի նահանգներում (1897թ. մարդահամարի նյութերով, առանց զինվորականների, %-ներով ընդհանուր բնակչության նկատմամբ)

	Անդրկովկասի ինքնագործ բնակչությունը			Ինքնագործ բնակչությ. 100 շնչին ընկնող անձինք	Այդ թվում՝ հայեր			Հայ ինքնագործ բնակչությ. 100 շնչին ընկնող անձինք
	արական	իգական	ընդամենը		արական	իգական	ընդամենը	
Բաքվի նահանգ	23,4	1,9	25,3	294,8	34,2	1,9	36,1	177,9
Ելիզավետպոլի -,,-	19,6	1,4	21,0	376,4	16,9	1,3	18,2	450,7
Երևանի -,,-	16,0	1,0	17,0	488,0	15,1	1,0	16,1	524,5
Թիֆլիսի -,,-	23,5	3,3	26,8	273,4	21,7	2,4	24,1	315,2
Քութայիսի -,,-	20,6	2,3	22,9	338,2	35,8	2,8	38,6	170,4
Կարսի մարզ	17,3	1,1	18,4	445,3	18,1	2,3	20,4	390,9
Ընդամենը Անդրկովկասում	20,5	2,0	22,5	344,1	18,3	1,5	19,8	404,3

Անդրկովկասի միջինի համեմատությամբ ցածր ցուցանիշով էր բնութագրվում նաև քաղաքային հայ ինքնագործ բնակչությունը: Առանց հայ ազգաբնակչության Անդրկովկասի քաղաքային բնակչության 42,7% ինքնագործներ էին, մինչդեռ Անդրկովկասի հայ ազգաբնակչության մեջ ինքնագործները կազմում էին ընդամենը 35,2%, թեև երկրամասի մի շարք նահանգներում հայ ինքնագործներն ավելի բարձր ցուցանիշներ ունեին: Անդրկովկասի միջինի համեմատությամբ բնակչության թվում հայ ինքնագործ բնակչության տոկոսը ցածր էր, բայց զուտ քաղաքային բնույթ ունեցող զբաղմունքներում, մասնավորապես արդյունաբերության մեջ, այն բարձր տեսակարար կշիռ ուներ: Օրինակ, ամբողջ Անդրկովկասում (առանց հայ բնակչության) արդյունաբերության, առևտրի ու տրանսպորտի ճյուղերում ընդգրկված էին ինքնագործների (առանց զինվորականների, ռանտյեների ու թոշակառուների) 18,7%-ը, իսկ Անդրկովկասի հայ բնակչության մեջ՝ 29,9%-ը: Անդրկովկասի արդյունաբերության, հաղորդակցության և առևտրի ճյուղերում զբաղված ինքնագործների 27,4%-ը հայեր էին: Միայն արդյունաբերության մեջ հայ ինքնագործները կազմում էին այնտեղ ընդգրկվածների 29,7%-ը, մինչդեռ գյուղատնտեսության մեջ զբաղված էր հայ բնակչության ընդամենը 16,9%-ը: Արդյունաբերական բնույթի զբաղմունքներում ընդգրկվածությունը բարձր էր քաղաքնե-

րում: Անդրկովկասի քաղաքների ինքնագործների մեջ հայերը կազմում էին 28,5%:

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության մասշտաբով հայ բնակչությունը չափազանց քիչ էր ընդգրկված հաղորդակցության և կապի ճյուղերում: Տրանսպորտը հիմնականում բաժանվում էր երկու մասի՝ մեքենայացված և չմեքենայացված (կառապանություն): Եթե առաջինում ընդգրկված էին հիմնականում ռուսներ, հրեաներ, եվրոպական այլ ազգությունների ներկայացուցիչներ, ապա երկրորդում ընդգրկված էին Կազանի թաթարներ, ադրբեջանցիներ, հայեր: Ռուսաստանից Արևելյան Հայաստան վերաբնակեցված մոլոկանների մեծ մասը բնակություն էր հաստատել բանուկ խճուղիների երկայնքով և զբաղվում էր կառապանությամբ[15]: «Բայց շուտով որոտաց սուլոցը, իր գործունեությունը սկսեց Երևանի երկաթգիծը, բեռը սկսեց տեղափոխվել նոր ուղղությամբ… կառապանը նորից պետք է դառնար հողագործ»[16]:

Արդյունաբերական բնույթի զբաղմունքներում հայ բնակչությունը մեծ տոկոս էր կազմում Բաքվում և Թիֆլիսում: 1897 թ. նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 29%-ը հայեր էին, մուսավաթական ազգային բուրժուազիայի իշխանության տարիներին՝ 1919 թ. այն իջավ 8,8%-ի[17]:

Առաջին աշխարհամարտը, ի թիվս արտադրության այլ ճյուղերի, զցում է նաև Բաքվի նավթարդյունաբերության զարկերակի հաճախականությունը:

Թիֆլիսի միայն ծխախոտի ութ խոշոր ֆաբրիկաներում աշխատող բանվորների շուրջ 70%-ը հայեր էին: Քիչ չէր հայ բանվորների թիվը նաև Բաթումի և Հյուսիսային Կովկասի արդյունաբերության մեջ ու նավահանգիստներում: Բազմաթիվ հայ բանվորներ էին աշխատում Թիֆլիս–Կարս, Ալեքսանդրապոլ–Երևան–Ջուլֆա երկաթուղու կառուցման վրա, որոնցից առաջինի շինարարությունը սկսվել էր 1895, երկրորդինը՝ 1899 թվականներին: 1896 թ. երկաթգծի շինարարության վրա աշխատում էր մոտ 10 հազար բանվոր, այդ թվում նաև 1891–1895 թթ. թուրքական կոտորածներից փախած և Արևելյան Հայաստանում ապաստան գտած գաղթական բանվորներ (մեծ մասամբ գյուղացիներ):

XX դ. սկզբներին Անդրկովկասի արդյունաբերական բնույթի զբաղմունքներում հայ բնակչության ընդգրկումը գնալով աճում էր, մինչդեռ գյուղատնտեսության մեջ նրա թիվն ավելի փոքր էր, քան մյուս ազգություններինը (բացառությամբ ռուսների և հրեաների): Եվ դա այն դեպքում, երբ, եթե նկատի չառնենք զինվորականներին, ռանտյեներին և թոշակառուներին, երկրամասի զբաղված բնակչության ավելի քան 60%-ը ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ: Ընտանիքների անդամների հետ հասարակական այդ խումբը կազմում էր ընդհանուր բնակչության 80,6%-ը:

---

[15] Ю. М е д з и х о в с к и й. Краткий очерк Новобаязетского уезда Эриванской губернии. СПб., 1908, с.142.

[16] *Նույն տեղում:*

[17] Перепись Баку в 1913 г. Баку, 1916, ч. I-4, вып. III.

Եթե Անդրկովկասի միջին ցուցանիշի համեմատությամբ գյուղատնտեսական բնույթի զբաղմունքներում հայ բնակչությունը բնութագրվում էր ավելի պակաս մասնակցությամբ, ապա քաղաքների գյուղատնտեսության մեջ զբաղված հայ ինքնագործ բնակչության տեսակարար կշիռը, ընդհակառակը, ավելի բարձր էր: Անդրկովկասի քաղաքներում գյուղատնտեսական բնույթի զբաղմունքներում, առանց հայերի, ընդգրկված էր նրանց ինքնագործների 7, իսկ հայ ինքնագործներից՝ 8,8%-ը: Դա բացատրվում է առաջին հերթին հայկական նահանգների քաղաքային բնակչության գյուղատնտեսական զբաղմունքի բնույթով:

3. Ինքնագործները Երևանի նահանգի և Կարսի մարզի քաղաքային ու գյուղական բնակավայրերում

Արևելյան Հայաստանում արդյունաբերության և, ընդհանրապես, սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակը պայմանավորեց նաև ինքնագործ բնակչության կենտրոնացումը գյուղական վայրերում: Քաղաքներում արտադրված արդյունքները սպառում էին ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում ապրողները, իսկ վերամշակված գյուղատնտեսական մթերքների մեծ մասը արտահանվում էր նահանգի սահմաններից դուրս: Քաղաքներում էր կենտրոնացված առևտուրը: Դրա հետևանքով ինքնագործների տեսակարար կշիռը քաղաքային բնակչության մեջ ավելի բարձր էր, քան գյուղական ինքնագործներինը: Նկատենք, որ Երևանի նահանգում և Կարսի մարզում ամբողջ Արևելյան Հայաստանի նման քաղաքային բնակչության զգալի մասը ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ և գյուղատնտեսական որոշ մթերքներով քաղաքն ապահովում էր ինքն իրեն:

Ըստ Ի. Շոպենի տվյալների, 1831 թ. Երևանի բնակչության մեջ ինքնագործների թիվը հասնում էր 4000 մարդու (բնակչության մոտ 35%): Նրանցից 2349-ը (շուրջ 60%-ը) ընդգրկված էին նյութական, իսկ մնացածը ոչ արտադրական ոլորտի ճյուղերում: Բայց ոչ արտադրական ոլորտում ընդգրկված բնակչության այդպիսի բարձր ցուցանիշը ոչ թե բնակչության սպասարկման բարձր մակարդակի արտահայտությունն էր, այլ բացատրվում էր զինվորականների մեծ թվով, որոնք հաշվարկվել են ոչ արտադրական ոլորտում ընդգրկված բնակչության հետ: Մնացածը հոգևորականներ էին, պետական աստիճանավորներ, ծառայողներ և այլն:

Հայաստանի քաղաքների, այդ թվում Երևանի, Օրդուբադի, Նախիջևանի բնակչության զգալի մասը ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ և զբաղվում էր այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբոստանային մշակաբույսերի և հացահատիկի արտադրությամբ: 30–50-ական թվականներին ցանում էին նաև բամբակ: Ալեքսանդրապոլի, Կարսի և Նոր Բայազետի բնակչությունը զբաղվում էր հացահատիկի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Բոլոր քաղաքներում զբաղվում էին նաև անաս-

նաբուծությամբ, բայց գյուղատնտեսության այդ ճյուղը քաղաքներում այնքան էլ տարածված չէր:

Ռուսաստանին միավորվելուց հետո այգեգործությամբ զբաղվողների թիվն ավելանում է: Երևանը և Օրդուբադն այգիների քաղաք էին: Մերձքաղաքային տարածությունները խաղողի այգիներ էին: Դրանց չորացրած մրգերը սպառվում էին նահանգի բոլոր մասերում: Երևանում 1831 թ. հաշվվում էր 1473, Օրդուբադում՝ 473, Նախիջևանում՝ 184 այգի[18]: Երևանում բնակչությունը չավելանալու և նույնիսկ ընտանիքների թիվը պակասելու պատճառով խաղողի մշակությունը և այդ բնագավառում զբաղվածությունը չէր ավելանում: 25 տարի անց Երևանում հաշվվում էր 1509 այգի, այսինքն՝ 25 տարում հիմնվել էր ընդամենը 36 այգի: Մինչդեռ այդ ընթացքում Նախիջևանում այգիների թիվը հասել էր 400-ի[19]: 1860-ական թվականների կեսերին Օրդուբադի այգիների տարածությունը հասնում էր 4000 դեսյատինի, որը, արծաթով հաշված, տարեկան բերում էր 80–90 հազ. ռուբլու եկամուտ[20]: Օրդուբադում, ինչպես նաև Նախիջևանում, բավականին եկամուտ էր ապահովում շերամապահությունը, թեև տվյալ զբաղմունքն այստեղ դարեր առաջ ավելի տարածված է եղել:

Քաղաքներին, աստիճանաբար, բնորոշ էր դառնում զբաղվածության ավելացումը առևտրի ու արդյունաբերության բնագավառում: Սկզբում գերակշռում էր բազմատեսակ արհեստներով զբաղվող մարդկանց թիվը: Արհեստագործության արտադրանքը նախափուլում բավարարում էր հիմնականում նահանգի պահանջարկը, բայց հետագայում մի շարք արհեստներ հասնում են այնպիսի կատարելության (մասնավորապես Ալեքսանդրապոլում), որ նրանց արտադրանքը դառնում է արտահանության առարկա: Հատկապես ավելանում է զբաղվածությունը արծաթագործության, դերձակության, կոշկակարության, արծաթե և ոսկե թաղիքով երիզված տարբեր նախշերով ու գույներով մետաքսե գործվածքների արտադրության բնագավառում:

Գրեթե բոլոր քաղաքներում արդյունաբերական բնույթի զբաղմունքներից տարածված էին կաշեգործությունը, օճառագործությունը, գինեգործությունը, աղյուսագործությունը և բրուտագործությունը, պանրի ու յուղի արտադրությունը: Ֆաբրիկագործարանային արտադրությունը գրեթե իսպառ բացակայում էր: Ինչ վերաբերում է առևտրի բնագավառում ընդգրկված քաղաքային բնակչությանը, ապա համեմատաբար մեծ քաղաքներում, մասնավորապես Ալեքսանդրապոլում, մասամբ Նախիջևանում և Երևանում, ավելանում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին առևտրում զբաղված բնակչությունը: Աստիճանաբար ավելանում էին Ալեքսանդրապոլով Թուրքիա արտահանվող բամբակի, մրգերի, հացահատիկի, բրնձի, բամբակե գործվածքեղենի, կաշվե կո-

[18] И. Ш о п е н. Указ. раб., с. 747-748.

[19] Кавказский календарь на 1852 г., Тифлис, 1851, отд. III, с. 446; Кавказский календарь на 1866 г., Тифлис, 1865, отд. III, с. 81.

[20] Кавказский календарь на 1868 г. Тифлис, 1867, отд. III, с. 409-410.

շիկների, կաշիների, ոչխարի մորթու, խոշոր եղջերավոր անասունների[21] և այլ ապրանքների արտահանության չափերը: Ալեքսանդրապոլի մաքսատնով Թուրքիայից ներմուծվում էր մետաքսեղեն, կիսամետաքսեղեն, բամբակե և բրդե գործվածքներ, ծխախոտ, անտառափայտ: 50-ական թվականների սկզբներին Ալեքսանդրապոլի մաքսատնով արտահանվել է 120 հազար, ներմուծվել՝ 145–150 հազար ռուբլու արտադրանք[22]: Ալեքսանդրապոլն առևտրական սերտ կապեր ուներ Թիֆլիսի, Էրզրումի, Կարսի, Ախալցխայի, Երևանի (և նահանգի այլ շրջանների) հետ: Մինչդեռ Երևան քաղաքի արտաքին առևտրական կապերն ավելի սահմանափակ էին: Երևանը Թիֆլիս և նահանգի շրջաններ էր արտահանում բամբակ, կաշի, օղի և այլն: XIX դ. երկրորդ կեսին Երևան քաղաքի համեմատությամբ Ալեքսանդրապոլում ավելի զարգացած էր նաև ներքին առևտուրը: 1865 թ. Երևանում առևտրով էին զբաղված ընդամենը 480, իսկ Ալեքսանդրապոլում՝ 670 մարդ[23]: Տասնհինգ տարի անց, 1880 թ. Երևանի ներքին առևտրում ընդգրկված էր ընդամենը 563, իսկ առևտրի և արդյունաբերության մեջ ընդգրկվածների ընդհանուր թիվը հասնում էր 2400 մարդու:

Արևելյան Հայաստանում թեև միշտ էլ ինքնագործ բնակչության գերակշռող մասը բնակվում էր գյուղական վայրերում, բայց առևտրի և արդյունաբերության ոլորտում ընդգրկվածները հիմնականում քաղաքներում էին: 1897 թ. տվյալներով քաղաքներում բնակվում էր Երևանի նահանգի և Կարսի մարզի ինքնագործ բնակչության (առանց զինվորականների) 17,5%-ը: Դա մի փոքր ավելի բարձր էր, քան քաղաքային բնակչության տեսակարար կշիռը ամբողջ բնակչության ընդհանուր կազմում: Այդ նույն տվյալներով առևտրի և արդյունաբերության բնագավառում զբաղմունք ունեցող ինքնագործ բնակչության ավելի քան 78%-ը կենտրոնացած էր քաղաքներում: Գյուղական վայրերում այդ բնագավառում էր ընդգրկված բոլոր ինքնագործների 7,8%-ը: Մինչև XX դ. սկիզբը տնտեսության խիստ ագրարային բնույթն իր որոշակի կնիքն էր թողել նաև քաղաքների բնակչության զբաղմունքի բնույթի և նրա զբաղվածության ճյուղային կառուցվածքի վրա: Նախ, ի տարբերություն Անդրկովկասի մի շարք քաղաքների, անգամ դարասկզբին Արևելյան Հայաստանում գյուղատնտեսությամբ էր զբաղվում քաղաքային բնակչության մի զգալի մասը: Այսպես, 1897 թ. մարդահամարի տվյալներով, Երևանի նահանգի քաղաքային բնակչության 25,8%-ը զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Ավելին, կային քաղաքներ, ուր արտադրությունը հիմնականում խարսխված էր գյուղատնտեսության վրա: Երկրորդ, Արևելյան Հայաստանի որոշ քաղաքներ, թեև դարասկզբին խստորեն առանձնանում էին իրենց առևտրաարդյունաբերական բնույթի զբաղմունքներով (Երևանն ու Ալեքսանդրապոլը, մասամբ Նախիջևանը), բայց դրանք առաջին հերթին առևտրի կենտրոններ էին: Երևան

[21] Кавказский календарь на 1850 г. Тифлис, 1849, отд. III, с. 33; Кавказский календарь на 1851 г., Тифлис, 1850, отд. III, с. 278-279; Кавказский календарь на 1866 г., отд. III, с. 74.

[22] Кавказский календарь на 1850 г., отд. III, с. 33.

[23] Там же, с. 74.

քաղաքում առևտրի բնագավառում ընդգրկված բնակչությունը իր թվաքանակով գերազանցում էր արդյունաբերության մեջ զբաղված բնակչությանն, իսկ Ալեքսանդրապոլում այդ ճյուղում ընդգրկվածները կազմում էին արդյունաբերության մեջ աշխատողների մոտ կեսը: Առևտրում զբաղված բնակչության թիվն ավելի շատ էր նաև Նախիջևանում և Նոր Բայազետում (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Ինքնագործների բաշխումն ըստ զբաղմունքի բնագավառների Երևանի նահանգի և Կարսի մարզի քաղաքներում ու գյուղերում (1897 թ., %-ով)[24]

	Երևանի նահանգ		Կարսի մարզ	
	քաղաքներ	գյուղական վայրեր	քաղաքներ	գյուղական վայրեր
ա) Արդյունաբերության և շինարարության մեջ	17,8	2,8	20,8	2,2
բ) Գյուղատնտեսության մեջ	27,7	89,2	31,5	88,6
գ) Առևտրում	17,5	1,1	14,0	1,7
դ) Հաղորդակցության, ճանապարհ. և կապի ճյուղերում	4,2	1,0	2,8	0,5
է) Հոգևորականներ և ազատ պրոֆեսիա ունեցողներ	2,9	0,9	3,5	1,4
այդ թվում				
1. Հոգևորականներ	1,2	0,7	0,9	1,0
2. Լուսավորության, առողջապահության, գիտության, գրականության և արվեստի բնագավառներում զբաղվածներ	1,6	0,2	2,5	0,4
զ) Չինովնիկներ	4,1	0,6	4,6	0,5
է) Մասնավոր ծառայություններ, սպասավորներ, օրամշակներ	20,6	2,9	19,3	3,7
ը) Ազատությունից զրկվածներ, պոռնիկներ, անորոշ, անհայտ	5,2	1,5	3,5	1,4
ընդամենը զբաղմունք ունեցողներ	100,0	100,0	100,0	100,0
Զբաղմունք ունեցողների տեսակարար կշիռն ամբողջ ինքնագործ բնակչության մեջ	68,0	97,4	39,3	84,7
թ) Զորք	26,7	1,7	59,2	14,4
ժ) Ռանտյե և թոշակառու	5,3	0,9	1,5	0,9
ընդամենը ինքնագործ բնակչություն	100,0	100,0	100,0	100,0

[24] *Այս և 5-րդ աղյուսակի հաշվարկները կատարվել են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա.* Первая всеобщая перепись ..., т. I, ч. 71, СПб., 1905, с. 105, 106, 107, 109; т. I, ч. 64, тетрадь I, СПб., 1900.

Եթե նկատի առնենք նաև այն, որ արդյունաբերության աշխատողների մեջ գերակշռում էին տնայնագործությամբ զբաղվողները և ջրաղացպանները (վերջիններիս արտադրանքը քիչ դեպքերում էր մտնում ապրանքաշրջանառության ոլորտ, քանի որ ջրաղացներում մեծ մասամբ ամեն ոք իր հատիկն աղում, դարձնում էր ալյուր, որի մի մասն էր միայն դուրս բերվում վաճառքի), ապա առևտրի բնագավառում զբաղված բնակչության գերակշռությունն ավելի նկատելի կդառնա:

XX դարասկզբին որոշ քաղաքներում նկատվում է գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության հարաբերական թվի նվազում: Առևտրի բնագավառում զբաղված բնակչության աճի տեմպերը սկսում են գերազանցել արդյունաբերական բնույթի զբաղմունքներում ընդգրկված բնակչության աճի տեմպերին:

Իսկ ի՞նչ պատկեր էր ներկայացնում զբաղվածության ճյուղային կազմը. խնդիրը քննարկենք ըստ զբաղվածության բնագավառների (տե՛ս 7 աղյուսակը):

Աղյուսակ 7

Բնակչության զբաղվածությունն ըստ զբաղմունքի բնագավառների Երևանի նահանգի քաղաքներում (1897 թ.)

Քաղաքներ	Զբաղմունքի բնագավառներ						
	Արդյունաբերություն և շինարարություն	գյուղատնտեսություն	հարդարակցություն ճանապարհ. և կապի ճյուղեր	առևտուր	զբաղմունքի այլ բնագավառներ	զորք	ազնվի և թոշակառու
Երևան՝ ինքնագործներ	2121	1012	376	1660	3738	2264	891
ընտանիքի անդամներ	3808	2177	700	4475	4164	167	1453
Ալեքսանդրապոլ՝ ինքնագործներ	2751	913	275	1201	1719	6350	329
ընտանիքի անդամներ	6087	3269	688	3445	2468	397	724
Նախիջևան՝ ինքնագործներ	547	272	162	376	1082	184	187
ընտանիքի անդամներ	1279	735	410	1290	1791	17	458
Նոր Բայազետ՝ ինքնագործներ	211	886	29	186	367	24	41
ընտանիքի անդամներ	759	4222	135	813	677	6	80
							112
							163

Օրդուբադ՝ ինքնագործներ ընտանիքի անդամներ	*484* *936*	*246* *597*	*89* *165*	*152* *373*	*497* *600*	*189* *8*	*223* *39*
Վաղարշապատ՝ ինքնագործներ ընտանիքի անդամներ	*315* *632*	*565* *1614*	*37* *89*	*86* *229*	*642* *701*	*91* *4*	*1783* *2917*
ընդամենը՝ ինքնագործներ ընտանիքի անդամներ	*6429* *13501*	*3894* *12614*	*968* *2187*	*3661* *10625*	*8045* *10401*	*9102* *599*	

Ինչ վերաբերում է ոչ արտադրական ոլորտներում ընդգրկված բնակչությանը, ապա նրա բավական մեծ տոկոսը բացատրվում է քաղաքներում, գյուղական վայրերի համեմատ, վարչական ապարատի, հոգևորականության, որոշ քաղաքներում զինվորականության առկայությամբ, ինչպես նաև լուսավորության բնագավառներում ընդգրկված բնակչության ավելի մեծ թվով:

Երևանի նահանգում և Կարսի մարզում բնակչության ընդհանուր թվում ինքնագործների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը բացատրվում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման ցածր մակարդակով: Ի տարբերություն Անդրկովկասի մյուս նահանգների, XIX դարավերջին և XX դարասկզբին Արևելյան Հայաստանում արդյունաբերության և բնակչության սպասարկման ոլորտներում զբաղվածության ցածր մակարդակը, իր հերթին, պայմանավորում էր քաղաքային բնակչության դանդաղ աճը: Երևանի նահանգը և Կարսի մարզը բնութագրվում էին ագրարային երկրներին հատուկ զբաղվածության ճյուղային կառուցվածքով: Այն էական առաջադիմական տեղաշարժ չապրեց նաև XX դարասկզբին: Այդ ընթացքում նույնիսկ գյուղատնտեսության մի շարք աշխատատար ճյուղերի զարգացումը, որ թելադրվում էր առևտրական երկրագործության շահերով, հանգեցրեց գյուղատնտեսության մեջ բնակչության բացարձակ չափերի խիստ ավելացմանը:

НАСЕЛЕНИЕ И САМОДЕЎЯТЕЛЬНЫЕ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (XIX–начало XX в.)

ВЛАДИМИР ХОДЖАБЕКЯН

Р е з ю м е

В Восточной Армении, которая находилась под властью Персии, в первых десятилетиях XIX в. начался процесс присоединения к России. В результате русско-персидской войны, начавшейся в 1804 г., в 1813 г. был заключен Гюлистанский мирный договор, по которому в состав России вошли северные районы Армении, Гугаркский ашхар (страна) – Памбак, Лори, Шамшадин, а также юго-восточные районы – Карабах, Гард-

манский ашхар с городом Гандзак (Гянджа), Казах, северная часть Товузского и западная – Шамхорского районов, впоследствии переименованный в Елизаветполь, Зангезур (в состав которого входил и Сотк), Мегри, Шорагял. В 1828 г. по Туркменчайскому договору к России были присоединены Ереванское и Нахичеванское ханства, Ордубадский уезд, переименованный в Армянскую область, а в 1850 г. – в Ереванскую губернию. В результате русско-турецкой войны 1877–1878 гг. к России присоединяется Карсская область. Таким образом, царское административное деление на губернии не учитывало территориальную целостность каждой нации. Большая часть армянского населения и самодеятельных Восточной Армении была сосредоточена в Ереванской, Тифлисской и Елизаветпольской губерниях. Согласно данным Всероссийской переписи населения 1897 г., численность населения Закавказья достигла 4850033 человек, 22% из них были армяне. Доля армянского городского населения в городском населении Закавказья в 1886-1914 гг. составила около 40%. Причем, значительный процент в Восточной Армении составляли самодеятельные армяне. По данным той же переписи самодеятельные в Закавказье составляли 24,13% всего населения, а армянское самодеятельное население – 19,5%, причем среди городского – 28,5%, сельского– 16,7%. Армянское самодеятельное население, главным образом, было вовлечено в промышленно-коммерческую и ростовщическую деятельность. Армянские караваны из разных городов Восточной Армении тянулись в Персию, Индию, Турцию, Китай и другие азиатские страны. Существовали тесные торговые отношения с Гамбургом, Марселем, Лионом и другими крупными европейскими торговыми центрами.